

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Էդուարդ Մարտիրոսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, հունիսի 19, 2024թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ՇԿԱ-ՄԿ (Մոսկովյան Կենտրոն)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի Մոսկովյան կենտրոնի տնօրենների կոնֆերանսին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիան (ՇԿԱ) իր առջև նպատակ է դրել շարունակաբար կատարելագործվել միջուկային էներգետիկայի ոլորտում: Կատարելության ընթացքը ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները՝ անվտանգության և հուսալիության բարձրացում, փորձի և գիտելիքների փոխանակում, նորարարական տեխնոլոգիաների ներմուծում:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Հանդիպումը պաշտոնապես բացելուց հետո Վ. Ակայոնովը (ՇԿԱ-ՄԿ տնօրեն) և ես ներկայացրեցինք հանդիպման նպատակներն ու խնդիրները:

Կազմակերպչական հարցերի քննարկումից հետո նիստի մասնակիցներն անցել են ծրագրով նախատեսված թեմաների քննարկմանը:

ՇԿԱ ՄԿ ղեկավարությունը մասնակիցներին է ներկայացրել կազմակերպության աշխատանքային պլանի առավել նշանակալի ուղղությունների իրականացման արդյունքները:

Մասնավորապես, ՇԿԱ ՄԿ տնօրենի տեղակալ Ս. Վիբորնովը ներկայացրել է զեկույցով՝ «Ընթացք դեպի կատարելություն» թեմայով:

Անընդհատ աշխատանք է տարվում ԱԷԿ-ներում անվտանգության ստանդարտների կատարելագործման ուղղությամբ: ՇԿԱ մշակում և կիրառում է առաջատար

մեթոդներ և գործելակերպեր, որոնք ուղղված են ռիսկերի նվազեցմանը և սարքավորումների հուսալիության բարձրացմանը:

ՇԿԱ-ի շրջանակներում ակտիվորեն գործում են ծրագրեր, որոնք ուղղված են աշխարհի տարբեր ԱԷԿ-ների միջև փորձի փոխանակմանը: Կանոնավոր նիստեր, սեմինարներ և համաժողովներ թույլ են տալիս օպերատորներին կիսվել հաջողված գործելակերպերով և սովորել գործընկերների սխալներից: Հատուկ ուշադրություն է դարձվում անձնակազմի ուսուցման և որակավորման բարձրացմանը: Կազմակերպվում են ուսուցումներ, դասընթացներ և պրակտիկաներ ԱԷԿ-ի աշխատակիցների համար՝ նրանց մասնագիտական հմտություններն ու գիտելիքները բարելավելու նպատակով: ՇԿԱ ակտիվորեն աջակցում է միջուկային էներգետիկայի ոլորտում հետազոտություններին ու մշակումներին: Նորագույն տեխնոլոգիաները ներմուծվում են գործող ԱԷԿ-ներում, ինչը նպաստում է դրանց արդյունավետության և էկոլոգիական անվտանգության բարելավմանը:

Այնուհետև հանդես եկավ Դմիտրի Չիչիկինը (ՇԿԱ-ՄԿ նոր էներգաբլոկների ղեկավար) «Նոր երկրներ և կազմակերպություններ, նոր տեխնոլոգիաներ» թեմայով:

Մի շարք երկրներ, ինչպիսիք են ԱՄԷ-ը, Բանգլադեշը և Բելառուսը, հաջողությամբ գործարկել են իրենց առաջին ԱԷԿ-ները: Սա վկայում է միջուկային էներգետիկայի նկատմամբ աճող հետաքրքրության մասին՝ որպես հուսալի և էկոլոգիապես մաքուր էներգիայի աղբյուր:

Նոր էներգետիկական ընկերությունների և միջուկային էներգետիկայով զբաղվող պետական գործակալությունների ստեղծմամբ ՇԿԱ-ի մասնակիցների թիվը աճում է: Այս կազմակերպությունները բերում են նոր գաղափարներ և փորձ, ինչը նպաստում է ոլորտի ընդհանուր զարգացմանը:

Նոր տեխնոլոգիաները, ինչպիսիք են փոքր մոդուլային ռեակտորները (ՓՄՌ), արագ նեյտրոնային ռեակտորները և պասիվ անվտանգության համակարգերը, ավելի լայն կիրառություն են գտնում: Այս նորարարությունները նպատակաուղղված են անվտանգության բարձրացմանը, ծախսերի նվազեցմանը և ԱԷԿ-ների էկոլոգիական հատկությունների բարելավմանը:

Տեխնոլոգիաների արագ զարգացման և գլոբալացման պայմաններում ՇԿԱ ու ՇԿԱ - ՄԿ-ն (Մոսկովյան կենտրոն) ներդնում են աշխատանքի նոր ձևեր՝ միջուկային էներգետիկայում բարձր անվտանգության և արդյունավետության ապահովման նպատակով: Ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս ՇԿԱ-ին կազմակերպել վիրտուալ համաժողովներ, սեմինարներ և ուսուցումներ: Սա ընդլայնում է գիտելիքների և փորձի փոխանակման հնարավորությունները, հատկապես միջազգային ուղևորությունների սահմանափակումների պայմաններում:

ՇԿԱ-ՄԿ-ն ակտիվորեն մասնակցում է միջուկային էներգետիկայի անվտանգությունն ու արդյունավետությունը բարձրացնող միջազգային նախագծերում: Համատեղ հետազոտություններն ու մշակումները աշխարհի առաջատար գիտական կենտրոնների հետ նպաստում են ոլորտի նորարարական զարգացմանը:

ՇԿԱ-ի շրջանակներում ուժեղացվում է համագործակցությունը տարածաշրջանային կենտրոնների միջև: Սա թույլ է տալիս հաշվի առնել տարբեր տարածաշրջանների առանձնահատկություններն ու պահանջները՝ ապահովելով միջուկային էներգետիկայի ավելի արդյունավետ աջակցությունն ու զարգացումը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՇԿՀԱ ու ՇԿՀԱ-ՄԿ-ն շարունակում են հարմարվել նոր մարտահրավերներին և ժամանակի պահանջներին՝ ապահովելով բարձր մակարդակի անվտանգություն և հուսալիություն միջուկային էներգետիկայում գլոբալ մակարդակով: Այս գիտաժողովի ընթացքում քննարկված թեմաները ընդգծում են ասոցիացիայի ընթացքը դեպի կատարելություն, նոր տեխնոլոգիաների ներմուծումն ու աշխատանքի նոր ձևերը, որոնք նպաստում են միջուկային էներգետիկայի արդյունավետ զարգացմանը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատանքային քննարկումների ընթացքում և կուլիսներում բավարար տեղեկատվություն է ստացվել ՇԿՀԱ-ի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ ձևավորելու համար:

Միջոցառումը բավականին արդյունավետ և ինֆորմատիվ էր առաջին հերթին ակտիվ քննարկումների շնորհիվ:

Քննարկումներն ու բանակցություններն ընթացել են առողջ և կառուցողական, բարենպաստ աշխատանքային մթնոլորտում, և բավականին արդյունավետ են եղել նպատակին հասնելու տեսանկյունից:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն



Է. Մարտիրոսյան